

զարգարուած են Կուտինայի Թանկարժէք չիւններով 1794ին, Եւզովիացի նորապսակ Պետրոս պատրիարքի գահակալութեան ժամանակ և Կեսարացի Պաշպազիրկանեան Յովհաննէս ամիրային ծախքով:

Ս. Էջմիածին եկեղեցիին մեծ դրան աջակողմը պատկերներու կարգին դուռ մը կայ վեց ոտք շարժական սանդուխով: Արտաքին սատափազարդ դուռնէն ներս, երկրորդ դուռ մ'ալ կայ, գեղեցիկ քանդակներով զարդարուած, որ հին արհեստի հազուագիւտ նմոյշ մը կը նկատուի, նոյն դրան երկու փեղկերուն վրայ հետեւեալ արձանագրութիւնները կը կարդացուին.

Ա. փեղկ.

«կազմ. դուռն սուրբ սահարի,
որ է յանուն Սուրբ Պաղոսի,
Առաքելոց մեծաց զնոյի».

Բ. փեղկ.

«սա յիշատակ անջնջելի
հեզանդոյն Յովհաննիսի,
և որում... թվ. ՊԻ» (= 1371):

Տաճարին մայր պատին մէջէն բացուած 25 ոտք նեղ սանդուխով մը բարձր, ճիշդ ներքեւի Ս. Աստուածածնի խորանին վրայ շինուած է Ս. Պողոսի մատուռը, որուն տարածութիւնն է մերձաւորաբար 4ական մէթր երկայն ու լայն: Մատուռն ամբողջ յախճապակիով զարդարուած է, մինչև իսկ կողակին վրայի կիսաբոլոր կամարը: Սարգիս վրդ. իր «Երուսաղէմի պատմութեան» մէջ 25 ոտք սանդուխին մէջտեղը կը յիշատակէ Ս. Սիոնի վերնատան անուամբ սեղան մը, որ այսօր գոյութիւն չունի: Մատուռին միւս կողմէն 12 ոտք սանդուխով բարձրութեամբ աւագ սեղանին ետեւէն դարձեալ 12 ոտք իջնելով՝ ներքեւի Ս. Կարապետի խորանին վրայ կը գտնուի Ս. Պետրոսի մատուռը, միւս մատուռին կատարելապէս յար և նման: Պօղոս Պետրոսի տօնին այս երկու սեղաններուն վրայ ալ միեւնոյն ժաման պատարագ կը մատուցուէր. հայ ուխտաւոր քահանայ մը՝ Զուար ձիւթերճի Օղուանուամբ, իր Ուղեգրութեան մէջ (Տե՛ս Բագնալիկ, 1867, էջ 207) հետեւեալ կերպով կը նկարագրէ երկու ժամարաներու պատարագելու կերպը. «գաւթ ի solի սոցս ժաւնարսն ետիւռ. սպասաւորն ուրբ չորսն մի կողմն, և չորսն մի կողմն. մեկ Պօղոս